

միասնական համակարգի կողմից, որով վստահություն կստեղծվի բանկային համակարգի նկատմամբ:

Այսպիսով, տնտեսության հիմնախնդիրների լուծման տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում վերանայել Հայաստանում գործող ավանդների, երաշխավորման համակարգի հայեցակարգը՝ ընդլայնելով երաշխավորման ենթակա ավանդատուների շրջանակները, ընդգրկելով նաև իրավաբանական անձանց, մասնավորապես փոքր ու միջին ձեռնարկությունների /այսուհետ՝ ՓՄՁ/ ավանդների մասնակի երաշխավորման մոտեցումը:

Ավանդների ապահովագրության համակարգում ՓՄՁ-ի բանկային ավանդների երաշխավորման գծով առաջադրված հայեցակարգային փոփոխությունը տնտեսության տեսանկյունից մասնակի կապահովի.

- փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության զարգացումը,
- ստվերային տնտեսության ծավալների կրճատումը,
- պասիվ խնայողությունների ակտիվացումը:

Մանր և միջին տնտեսավարող սուբյեկտների բանկային ավանդների երաշխավորումը և պարբերական երաշխիքային վճարների տարբերակված մոտեցումը, բանկի ներքին հսկողության համակարգի գնահատման հիման վրա, կարող են լրացուցիչ խթանիչ գործոն լինել երկրի տնտեսության զարգացման գործում, ինչպես նաև բանկային համակարգի հուսալիության բարձրացման և ավանդատուների վստահության ձևավորման կարևոր նախապայման:

Ավանդների ապահովագրության հիմնախնդիրները բազմազան են և բազմառեսակ, բոլորին հնարավոր չէ անդրադառնալ սույն հոդվածի հարցադրումների շրջանակներում: Սակայն փորձ է կատարվել այդ ամենից տարանջատել և ներկայացնել այն հիմնախնդիրները, որոնք իրենց էությանը առնչություն ունեն սույն հոդվածի հարցադրումներին:

ՎԱՅՄԸ ԲԱԲԱՅԱՆ

ՀՀ ԳԱՄ Մ.Զոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ (ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Տնտեսության ֆինանսական հատվածի կայունության ապահովման գործում կարևորվում է ավանդատուների վարքագիծը, որը պայմանավորված է բանկերի գործունեության հուսալիությամբ: Բանկային համակարգի բոլոր հնարավոր հաճախորդներին միավորում է մեկ ընդհանուր ու թերևս կարևորագույն պահանջ. բանկերը պետք է լինեն հուսալի և կառավարելի:

Այս պահանջը գերխնդիր է և այն անհրաժեշտ է ապահովել: Ընդ որում, կարևորվում է ինչպես ամբողջ բանկային համակարգի, այնպես էլ առանձին բանկերի հուսալիության ապահովումը: Սա այն խնդիրն է, որը հնարավոր չէ որոշակի և կոնկրետ քայլերի միջոցով մեկընդմիջտ լուծել: Այն լուծելու համար անհրաժեշտ է մշակել հստակ տեսլական, ստեղծել հուսալի հիմքեր ունեցող թափանցիկ ու արդյունավետ համակարգ և անընդհատ կատարելագործել ու վերահսկել այն:

Տնտեսության մեջ առկա ազատ ֆինանսական միջոցների վերաբաշխումը և բանկային ավանդների առկա պոտենցիալի իրացումը մշտապես գոյություն ունեցող խնդիր է, և դրա լուծումը պահանջում է հստակ ուղղորդված ու փոխշաղկապված քայլերի իրականացում:

Բանկային համակարգի հուսալիության ապահովման համար կարևոր դերակատարություն ունեն ինչպես պետական մարմինները, այնպես էլ առանձին բանկերը: Պետական մարմիններն ի դեմս ՀՀ կենտրոնական բանկի պետք է ապահովեն անհրաժեշտ օրենսդրական դաշտը և բավարար վերահսկողությունը, իսկ բանկերը պետք է ոչ միայն կատարեն օրենսդրության պահանջը, այլև շահագրգիռ ու հետևողական լինեն իրենց հուսալիության ամրապնդման գործում:

Բանկային համակարգի կառավարելիությունն ու հուսալիությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Կենտրոնական բանկի ջանքերի շնորհիվ ձևավորվել ու անընդհատ կատարելագործվում են ֆինանսաբանկային համակարգի գործունեությունը կարգավորող ու դրա հուսալիության ապահովմանը նպատակաուղղված օրենսդրությունը և միջազգային փորձի ներդրման գործընթացը:

Սակայն առանձին բանկերի հուսալիությունը պայմանավորվում է ոչ միայն օրենսդրության պահանջների հստակ կատարմամբ, այլ նաև դրանց ներքին հսկողական համակարգի բավարար արդյունավետությամբ: Ներքին հսկողական համակարգի բավարար մակարդակի առկայությունը կարևորվում է ոչ միայն տվյալ բանկի հուսալիության ապահովման նպատակով, այլև առաջնային է համարվում դրա վարկանիշի ու արդյունավետության գնահատման համար:

Յուրաքանչյուր բանկի բնականոն գործունեության համար ներքին հսկողական համակարգի իրական դերն ու ազդեցությունը պարզաբանելու նպատակով ներկայացնենք դրա էությունը և գնահատման հնարավոր մոտեցումները:

Ներքին հսկողության համակարգը բանկի կազմակերպական կառուցվածքի, գործընթացների ու միջոցառումների համալիր է, որը կոչված է պահպանելու բանկի ակտիվները, ապահովելու հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը, բարձրացնելու իրականացվող գործառնությունների արդյունավետությունը, ապահովելու բանկի գործունեության համապատասխանությունը գործող օրենսդրությանը և բանկի ներքին իրավական ակտերին:

Ըստ էության, ներքին հսկողական համակարգը սկզբունքների, մոտեցումների և ներքին մշակույթի մի ամբողջական համակարգ (ցանց) է, որն ընդգրկում է ողջ բանկը (առկա բոլոր ուղղահայաց ու հորիզոնական կապերը) և կոչված է բանկի ռազմավարության իրականացման գործընթացի կառավարելիության և հուսալիության ապահովմանը:

Ներքին հսկողական համակարգի հիմնական նպատակներն են.

1. գործառնական նպատակ - բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերի բացահայտում և կառավարում, բանկի աշխատանքների արդյունավետ կազմակերպում և անձնակազմի արդյունավետ կառավարում,
2. տեղեկատվական նպատակ - բանկում որոշում կայացնելու համար անհրաժեշտ հաշվապահական, ֆինանսական և այլ հաշվետվությունների հուսալիություն, ամբողջականություն և բանկի ներսում տեղեկատվության անհրաժեշտ հոսքերի ապահովում,
3. համապատասխանության նպատակ - բանկի գործունեության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի, բանկի կառավարման իրավասու մարմինների կողմից հաստատված ներքին իրավական ակտերի (քաղաքականությունների, կարգերի, կանոնակարգերի, ընթացակարգերի, հրահանգների, ուղեցույցների և այլն) պահանջներին:

Բանկերի ներքին հսկողության համակարգի հիմնադրույթներն են.

1. Բանկերի ներքին հսկողական համակարգը նկարագրվում է բանկի խորհրդի ու գործադիր մարմինների կողմից ընդունված բոլոր ներքին իրավական ակտերում՝ անկախ դրանց նպատակայնությունից և ուղղվածությունից: Բանկի ներքին ակտերը պետք է հասանելի լինեն բոլոր աշխատակիցներին: Որոշակի գործունեության և/կամ գործառնության մեջ ընդգրկված աշխատակիցները պետք է ամբողջությամբ տիրապետեն տվյալ գործունեու-

թյանը և/կամ գործառնությունը կարգավորող ներքին բոլոր ակտերին: Բանկի ներքին հսկողական համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը պարբերաբար, սակայն ոչ պակաս քան տարին մեկ անգամ, վերանայվում են՝ միջավայրի փոփոխություններին համապատասխանեցնելու նպատակով:

2. Բանկի ներքին հսկողական համակարգն ապահովում է ողջամիտ ու կշռադատված բանկային գործունեության իրականացում՝ հաշվի առնելով տվյալ բանկի գործունեության բնույթը, առկա ու հնարավոր ռիսկերը, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները, գործարար շրջանառության սովորույթները, սոցիալական պատասխանատվության տարրերն ու միջավայրի փոփոխությունները: Բանկի ներքին հսկողական համակարգը պետք է ապահովի իր գործունեության ու որոշումների կայացման գործընթացների բավարար հսկողություն: Այն դեպքում, երբ բանկը փոխկապակցված է մեկ այլ տնտեսվարող սուբյեկտի հետ և ուղղակի ազդեցություն է կրում դրա գործունեությունից ու ռիսկերից և/կամ այդ սուբյեկտի ֆինանսական հաշվետվությունները կոնսոլիդացվում են բանկի հաշվետվություններին, ապա բանկի և այդ սուբյեկտի ներքին հսկողական համակարգերը պետք է համահունչ լինեն և ապահովեն համագործակցության ու համադրելիության բավարար մակարդակ:
3. Բանկի ներքին հսկողական համակարգն անընդհատ պետք է լինի ուշադրության կենտրոնում, ենթարկվի բազմակողմ վերլուծության և ընթացիկ մոնիտորինգի: Վերլուծության և մոնիտորինգի արդյունքները պետք է ապահովեն այս համակարգի անընդհատ կատարելագործումը:
4. Ներքին հսկողական համակարգը ներառում է արտակարգ իրավիճակների դեպքում իրականացվելիք քայլերն ու միջոցառումները, որոնք անհրաժեշտ է մանրամասն նկարագրել բանկի համապատասխան ներքին ակտերում:
5. Ներքին հսկողական համակարգի պահանջներից ելնելով՝ բանկի բիզնես գործընթացները նկարագրող ներքին ակտերը պետք է առնվազն պարունակեն այդ գործընթացի իրականացման բոլոր հերթական քայլերի մանրամասն նկարագիրը, դրանցից յուրաքանչյուրի հետ առնչվող հնարավոր ռիսկերի ու բացասական իրադարձությունների նույնականացումը և դրանք կառավարելու, կանխարգելելու ու բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ներքին հսկողության մեխանիզմները:
6. Ներքին հսկողական համակարգի պահանջներից ելնելով՝ բանկի կազմակերպական կառուցվածքը պետք է համապատասխանի բանկի ռազմավարությանը և բիզնես գործառնություններին՝ ապահովելով ներքին հսկողական համակարգի անխափան գործունեությունը: Բանկի բոլոր կառուցվածքային ու տարածքային ստորաբաժանումները պետք է գործեն իրենց իրավասություններն ու ֆունկցիոնալ պարտականությունները հստակ սահմանող ներքին ակտերի համաձայն: Բանկի կազմակերպական կառուցվածքը՝
 - նպատակաուղղվում է գործունեության անընդհատության ապահովմանը,
 - հարմարեցվում է բանկի գործունեության բնույթին, չափին և բազմաձևությանը,
 - թարմացվում է՝ հաշվի առնելով միջավայրի փոփոխությունները,
 - արտացոլում է բիզնես գործընթացները և ռիսկերը:
7. Ներքին հսկողական համակարգի պահանջներից ելնելով՝ բանկին անհրաժեշտ է ունենալ հստակ կանոնակարգված ներքին տեղեկատվական հոսքերի, փաստաթղթաշրջանառության և ներքին հաշվետվական համակարգ: Այն մի կողմից ապահովում է բանկի կառավարման ու գործունեության համար անհրաժեշտ և արժանահավատ ներքին տեղեկատվական հոսքեր, մյուս կողմից հստակ սահմանում է յուրաքանչյուր օգտագործողի տեղեկատվական հոսքերի հասանելիության աստիճանը:

8. Ներքին հսկողական համակարգի նպատակներից մեկն է բանկի կապիտալի համարժեքության գնահատումը: Բանկի կապիտալի համարժեքությունը գնահատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել.

- տոկոսադրույքի ռիսկի մակարդակը,
- փոխարժեքի ռիսկի մակարդակը,
- գնային ռիսկի մակարդակը,
- բանկի իրացվելիությունը,
- բանկի ակտիվների որակը,
- բանկի ֆինանսավորման աղբյուրները (ավանդներ, փոխառու միջոցներ, կապիտալի լրացուցիչ աղբյուրներ) և միջոցների կառավարման որակը,
- բանկի ավանդային և փոխառու միջոցների ծավալների միտումներն ու տատանողականությունը,
- բանկի եկամուտների մակարդակը և որակը,
- բանկի ընթացիկ և ապագա ծախսերի, հնարավոր կորուստների ազդեցությունը բանկի կապիտալի կառուցվածքի վրա,
- գլխավոր պահուստի և չբաշխված շահույթի գումարների բավարար լինելը կորուստները ծածկելու համար,
- բանկի ֆինանսական և գործառնական ռիսկերի կառավարման նպատակով բանկում առկա ներքին փաստաթղթերի պահանջների բավարար լինելը և այդ պահանջներին համապատասխան գործելը,
- բանկի աճի տեմպերը,
- շահաբաժինների վճարման սկզբունքները և դեպքերը,
- հաշվեկշռի կառուցվածքը,
- հետհաշվեկշռային հոդվածները,
- շահութաբերության այն մակարդակը, որը թույլ կտա բանկին ընդլայնել իր գործունեությունը, մնալ մրցունակ և, անհրաժեշտության դեպքում, համալրել իր կապիտալը:

Ներկայացված հիմնադրույթների հիման վրա կառուցվում են ներքին հսկողական համակարգի նվազագույն պայմանները, որոնք բոլոր ՀՀ առևտրային բանկերը պարտավոր են ապահովել: Սակայն որքանով է այն չափելի ու գնահատելի:

Կարծում ենք, խոսելով ներքին հսկողական համակարգի և մասնավորապես ռիսկերի մասին, նկատի է առնվում այն պոտենցիալ (հնարավոր) վտանգը, որի դեպքում սուբյեկտը, որոշակի իրադարձությունների առաջացման հետևանքով, կկրի կորուստներ: Հետևաբար, բանկի ներքին հսկողական համակարգի գնահատման հիմքում պետք է լինի բացասական երևույթների (արդյունքի) կանխարգելման (հավանականության նվազեցման) սկզբունքը, այլ ոչ թե բացասական փաստի պատճառաբանման ունակությունը:

Վերը շարադրվածը բխում է ներքին հսկողական համակարգի բուն էությունից, քանի որ այն առաջին հերթին կանխարգելման, այլ ոչ թե պարզաբանման նպատակ ունի: Յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի, այդ թվում բանկի, գործունեության արդյունքային ցուցանիշները հաճախ չեն արտահայտում սուբյեկտի իրական վիճակը, հատկապես «թաքնված» և/կամ «թաքցված» ռիսկերի առումով: Այսպես, բանկը կարող է ունենալ բանկային համակարգի միջին շահութաբերության մակարդակին մոտ շահութաբերություն, սակայն կրել բավականին լուրջ կորուստներ՝ կապված գործառնական ռիսկերի կառավարելիության ցածր մակարդակի հետ, և այդ կորուստները որևէ կերպ հնարավոր չլինի բացահայտել շահութաբերության ցուցանիշի վերլուծության միջոցով: Կամ տվյալ պահին բանկի ակտիվների եկամտաբերության ընդունելի մակարդակը բավարար չէ բանկի ներդրումային փաթեթի իրական ռիսկայնությունը

գնահատելու համար, քանի որ հնարավոր է «թաքնված» կամ «թաքցված» գործընկերային ռիսկերի բավական բարձր մակարդակի առկայություն:

Ներքին հսկողության համակարգի անբավարար մակարդակը կամ բացթողումները, որպես կանոն, հանգեցնում են առաջին հայացքից անսպասելի, սակայն իրականում բավական հիմնավորված լուրջ կորուստների: Բանկի գործունեության ընթացքում ի հայտ եկող և/կամ ներքին աուդիտի կողմից հայտնաբերվող, հաճախ «անմեղ» թվացող ընթացիկ սխալներն ու թերություններն իրականում բավական լուրջ ահազանգ են բանկի ներքին հսկողական համակարգի բացթողումների վերաբերյալ:

Այդ իսկ պատճառով առաջարկվել է մշակել ներքին հսկողության համակարգի գնահատման ընդհանուր և հնարավորինս ստանդարտացված համակարգ, որը հիմնված կլինի ոչ թե բանկի արդյունքային ցուցանիշների վերլուծության, համեմատության և/կամ համադրելիության վրա, այլ ի վիճակի կլինի տալ բանկի կողմից իրականացվող գործառնությունների և գործողությունների որակական բնութագիրը դրանց նախապատրաստման և իրականացման փուլերում: Գնահատման համակարգը մշակելիս անհրաժեշտ է հատկապես ուշադրություն դարձնել որոշումների կայացմանը, դրանց իրականացմանը և ներբանկային տեղեկատվական հոսքերի կառավարմանն ու խեղաթյուրման բացառման մեխանիզմների որակին:

Որպես օրինակ նշենք ներքին հսկողական համակարգի գնահատման միայն մի քանի չափորոշիչներ: Այսպես.

➤ Որոշումների կայացման և իրականացման տեսակետից՝

1. որքանո՞վ է հստակ բանկի խորհրդի, կոլեգիալ ու միանձնյա կառավարման մարմինների, բանկի, ստորաբաժանումների ղեկավարների, այլ պաշտոնյաների ու աշխատակիցների իրավասությունների սահմանազատումը, և որքանո՞վ է այն համապատասխանում օրենսդրության պահանջներին ու բանկի կարիքներին,
2. որոշումների կայացման գործընթացը որքանո՞վ է համապատասխանում որոշում կայացնողի իրավասություններին և բանկի ռազմավարությանը,
3. ընդունվո՞ւմ են արդյոք բանկի բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ բոլոր որոշումները, թե՞ կան բաց տարածքներ,
4. կայացվող որոշումները համապատասխանո՞ւմ են արդյոք բանկի իրական պահանջներին, և որքանո՞վ են դրանք գործնականում իրագործելի,
5. հասանելի՞ են արդյոք այդ որոշումները դրանք իրականացնողներին, և որքանո՞վ են կայացված որոշումները իրականացվում,
6. կայացված որոշումները ինչքանո՞վ են համապատասխանում ներքին հսկողական համակարգի պահանջներին,
7. որքանո՞վ է վերահսկվում կայացված որոշումների իրականացման գործընթացը և այլն:

➤ Ներբանկային տեղեկատվական հոսքերի կառավարման տեսակետից որքանո՞վ են.

1. բանկի ներքին տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորություններն ու համակարգերն ի վիճակի ապահովել անհրաժեշտ ներբանկային տեղեկատվական հոսքերի բավարար մակարդակն ու գաղտնիությունը,
2. հստակեցված բանկի յուրաքանչյուր աշխատակցի, այդ թվում՝ նաև պաշտոնյաների՝ տեղեկատվական հոսքերից օգտվելու (հասանելիության) սահմանաչափերը և որքանո՞վ են դրանք համապատասխանում նրա իրավասություններին ու ֆունկցիոնալ պարտականություններին,
3. կարգավորված ներքին փաստաթղթաշրջանառությունը, և համապատասխանո՞ւմ է այն արդյոք բանկի իրական պահանջներին,
4. հստակեցված ու կանոնակարգված բանկի ստորաբաժանումների ու առանձին աշխատակիցների փոխհամագործակցությունը և տեղեկատվության փոխանակումը,

5. բանկի տեղեկատվական հոսքերը պաշտպանված խեղաթյուրումներից, և ստացված տեղեկատվության ճշտման ու ստուգման ի՞նչ մեխանիզմներ կան,
6. ներբանկային հաշվետվական համակարգը համապատասխանում բանկի կառավարելիության պահանջներին, և որքանո՞վ է այն նպաստում որոշումների կայացման գործընթացին,
7. բանկի տեղեկատվական համակարգը ինչքանո՞վ է ճկուն. և ի վիճակի՞ է արդյոք այն արագ արձագանքելու բանկի միջավայրի փոփոխությանը և այլն:

Իրականում ներքին հսկողական համակարգի գնահատման չափորոշիչներն անհամեմատ ավելի բազմազան և բազմաբնույթ կարող են լինել, քան ներկայացված է վերը: Կարևորն այն է, որ ներքին հսկողական համակարգի գնահատման համակարգը մշակելիս պետք է առաջնորդվել Մենթոջական ընդգրկվածության սկզբունքով, այսինքն՝ բանկում չի կարող լինել որևէ օղակ, երևույթ կամ գործողություն, որը դուրս լինի ներքին հսկողական համակարգից:

Ներքին հսկողական համակարգի գնահատման համակարգի հիմքում պետք է ընկած լինեն հստակ սկզբունքներ և ստանդարտ մոտեցումներ, որոնք հնարավորինս կբացառեն մասնական կիրառողի սուբյեկտիվիզմը և համադրելի կդարձնեն տարբեր բանկերի ներքին հսկողական համակարգի գնահատականները:

Ներկայացված մոտեցման արդիականությունը վկայում են 2008 թվականի ընթացքում ֆրանսիական «Մոսիեստե ժեներալ» բանկում տեղի ունեցած իրադարձությունները՝ ֆոնդային շուկայում կրած կորուստը, այն դեպքում, երբ բանկը վերջին տարիներին գործել է շահույթով: Նշվածը «թաքնված» խնդիրների շարքից է:

ԱՆՆԱ ԲԱՅԱԴՅԱՆ

ՀՊԱՀ դասախոս

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկերի գործունեության արդյունավետության գնահատման ժամանակ կարևոր նշանակություն է ստանում շահութաբերության ցուցանիշների վիճակագրական վերլուծությունը՝ ինչպես դրանց վրա ազդող գործոնների, այնպես էլ առանձին գործոնի ազդեցության չափի: Օրինակ, դժվար չէ նկատել, որ յուրաքանչյուր բանկի շահութաբերության ամենակարևոր ու հաճախ կիրառելի ցուցանիշներից են ROE-ն ու ROA-ն, և միաժամանակ, դրանց առընթեր մասնական ակտիվների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակիցը (կամ այլ կերպ՝ բանկի մուլտիպլիկատորը): Քանի որ ROE-ն և ROA-ն ունեն մույն համարիչը՝ զուտ շահույթը հարկումից հետո, ուստի դրանց հիման վրա էլ այդ հարաբերական ցուցանիշներից մեկը կարելի է արտահայտել մյուսով: Բերված ցուցանիշների միջև եղած կապն արտահայտվում է հետևյալ բանաձևի միջոցով¹.

$$ROE = ROA \times \frac{U}{U4} \quad (1)$$

որտեղ՝

ROE-ն բանկի սեփական կապիտալի շահութաբերությունն է,
ROA-ն՝ բանկի ակտիվների շահութաբերությունը,
U - ն բանկի ակտիվներն են,

¹ Питер С. Роуз. Банковский менеджмент. М., 1995, с. 133.